«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
2017-2018 ուսումնական տարի
1-3-րդ դասարաններ. «Իմացումի հրճվանք»
Ունսումնական առաջին շրջանի կազմակերպում

Բովանդակություն	Ժամաքանակ					
	I		II		III	
	Շաբ.	Տար.	Շաբ.	Տար.	Շաբ.	Տար.
Ընդհանուր բաղկացուցիչ						
Մայրենի	5	160	5	160	5	160
Անգլերեն	2	64	2	64	2	64
Ռուսերեն	2	64	2	64	2	64
Մաթեմատիկա	4	128	4	128	4	128
Ես և շրջակա աշխարհը	2	64	2	64	2	64
Երաժշտություն, պար	2	64	2	64	2	64
Կերպարվեստ, տեխնոլոգիա	2	64	2	64	2	64
Ֆիզկուլտուրա	3	96	3	96	3	96
Շախմատ և տրամաբանական այլ խաղեր	1	32	1	32	1	32
Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ						
Սովորողի ընտրած գործունեություն	2	64	2	64	2	64
Տնային ուսումնական աշխատանք						
Լրացուցիչ կրթություն						

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:

Սովորողի ծնողի հետ պայմանագիր կնքելիս մանրամասն ներկայացվել է ուսումնական պլանը, որից հետո կցվել է ուսումնառության պայմանագրին: Այսպես արվել է 1-ին դասարանցիների, այլ դասարաններ ընդունվողների դեպքում, իսկ անհատական ուսումնական պլանը սովորողի ու ծնողի հետ նայելուց հետո դարձել է ուսումնառության պայամագրի հավելված:

2. Կրթական ծրագիր ընդունվում է այն սովորողը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է ծրագիրը և սահմանված կարգով պայմանագիր կնքում ուսումնառության մասին.
   Բոլոր սովորողների հետ կնքված է ուսումնառության անհատական պայմանագիր:
   Պայմանագրի 2-րդ օրինակը սահմանված կարգով ուղարկվել է ծնողի էլ հասցեին:
   - մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը 6 տարեկան դարձող երեխան,

2011թ. ծնվածներ, ովքեր անցել են իմացումի հրճվանքի առաջին տարին, սահմանված կարգով հուլիսի 1-ով կնքել են իմացումի հրճվանքի 2-րդ տարվա ուսումնառության պայմանագիր:
2011թ. նոր դպրոց դիմել են 55 ովորող, ովքեր սահմանված կարգով կնել են ուսումնառության պայմանագիր, կատարել են առաջին ամսվա ուսումնական պայմանագրվով որոշված վճարը: Խմբերի ուսումնական գործունեությունը կազմակերպվում է քոլեջում:

3. համապատասխան դասարանի սովորողը (կամ սովորողի զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին համապատասխան դասարան՝ սահմանված կարգով):
   2-5-րդ դասարան ընդունվել են 10 սովորող, ովքեր սահմանված կարգով անցել են մուքի ճամբարով, ծնողների հետ կնքվել ուսումնառության պայամագիր:
   Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր և սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
4. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12-22 հոգիանոց խմբերով:
   Նոր դպրոցի դասարաններն ու խմբերը համապատասխանում են ցուցանիշներին:
5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
6. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին:
7. 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ուսուցումը, սահմանված կարգով, կազմակերպվում է «Ուսումնական աշուն» նախագծով:

8. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական նեթբուք-նոթբուքով կամ պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
   Նոր դպրոցում անլար ինտերնետը լավ վիճակում է, սովորողները դպրոց են գալիս անհատական գործիքով, 1-2-րդ դասարանցիները ունեն դասարանական բլոգ, որը վարում է դասվարը, իսկ 3-րդ դասարանցիները սկսել են բլոգային ուսուցումը: Երնթակայքում հրապարակված են սովորողների բլոգների հղումները:

9. Մեդիագրադարանը, դպրոցի գրադարանը, դասավանդողների բլոգները սովորողին տանը, դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
10. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության, երկարացված օրվա ծրագրի) տարեկան ուսումնական օրացույցով: Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը, տոները, ստեղծագործական այլ հավաքները՝ որպես լրացուցիչ ուսուցում:
    Ուսումնական առաջին շրջանում իրականացվող նախագծերը յուրաքանչյուր ամսվա սկզբին հրապարակվել են ենթակայքում. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր
11. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբերին մասնակցությունը, սովորողի մասին

անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:

Դպրոցի ենթակայքում տեղադրված են սովորողների բլոգները, էլ. Մատյանները, որտեղ գրանցվում են մասնակցությունները:

12. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
13. Բոլոր դասընթացները միավորվում են «Իմացումի հրճվանք» ծրագրում, որը ղեկավարում է դասվարը:
14. Ուսումնական գործունեության ընթացքում սովորողները վարժվում են թվային տեխնիկան՝ համակարգիչ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ, անվտանգ, խնամքով օգտագործելուն: Յուրացնում են նկարչական ծրագիր, սովորում են իրենց կարիքների համար օգտագործել տեքստային որևէ խմբագիր: Կարողանում են համացանցում գտնել իրենց հետաքրքրող ֆիլմեր, խաղեր: Տեխնիկան օգտագործում են կարդալ և գրել սովորելու համար:

Ստեղծված ուսումնական նյութերը հրապարակված են դասարանական բլոգներում, յուրաքանչյուր դասարան ունի դասարանական ռադիո-խմբագրություն, ռադիո-թողարկումները հրապարակվում են բլոգներում:

15. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:

Ընդհանուր պարապմուքը կազմակերպվում է Նոր դպրոցի սրահում, մասնակիցներն են՝ 1-5-րդ դասարանցիները: Ընդհանուր պարապմունքը սկսվում է առավոտյան 9:00, ավարտվում է՝ 09:15: Յուրաքանրյուր ամսվա 1-ին օրացույցում հրապարակվում է պատասխանատու դասարանների ցուցակը: Պատասխանատու դասարանը բլոգում, ենթակայքում հրապարակում է շաբաթվա ծրագիրը:

16. «Իմացումի հրճվանք» ծրագիրը ներառում է շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավման նախագծեր:
17. Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր:

18. Անգլերենը և ռուսերենը ամենօրյա ուսումնական պարապմունքներ են:

1-3-րդ դասարաններում օտար լեզուն ամենօրյա է 20ր, 1-2րդ դասարանում բանավոր, 5 տարեկանների իմացումի հճվանք ծրագրում օտար լեզվի ծրագիրը կազմակերպում է դասվարը:

19. «Ես և շրջակա աշխարհը» դասընթացը կազմված է «Ես և ինձ շրջապատող մարդիկ», «Անվտանգ երթևեկություն», «Մեր բակը», «Իմ քաղաքը», «Հայաստան», «Երկիր մոլորակ», «Տիեզերք», «Իմ խնամած բույսերը», «Իմ խնամած կենդանիները» ուսումնական նախագծերից:

20. «Երաժշտությունը» ներառում է խմբային երգ, պար, երաժշտության ունկնդրում, ռիթմիկա-շարժում, երաժշտական գործիքների հետ ծանոթացում, երաժշտական խաղեր:

Երաժշտության դասընթացը կազմակերպում է դասվարը՝ մասնագետի խորհրդատվությամբ: Երաժշտության դաստիարակը շաբաթական մեկ ժամ 1-3-րդ դասարաններում դասվարի հետ իրականացնում է երգի-պարի ուսուցման դասընթաց:

21. «Կերպարվեստ և տեխնոլոգիա» դասընթացը ներառում է «Նկարչություն», «Խեցեգործություն», «Աշխատանքային հմտություններ»: Իրականացվում են բացօթյա պլեներներ:
Այս դասընթացը կազմակերպվում է դասվարը:
22. Ֆիզկուլտուրան կազմակերպվում է ամենօրյա պարապմունքներով, որոնք ներառում են մարմնամարզական վարժություններ, շարժուն խաղեր, հեծանիվ:
Առաջին դասարանցիները շաբաթական մեկ անգամ լողում են: Ծրագրի մաս են նաև քայլարշավները, բարձունքներ արշավելը, որոնց ընթացքում սովորողները ծանոթանում են անվտանգ գործունեության տարրերին:
Նոր դպրոցում 1-3-րդ դասարանում ֆիզկուլտուրա դասընթացը վարում է դասվարը: Մարմնամարզության մեկ դասաժամ դասվարը իրականացնում է Մայր դպրոցի մարմնամարզական դահլիճում, մյուս 2ժամը՝ նոր դպրոցի բակում, մազաստահում: Առաջին դասարանցիների լողի ուսուցումը սեպտեմբեր ամսին կազմակերպվել է Նոր դպրոցի լողափում, սեպտեմբերի 20-ից լողուսուցումը կազմակերպվում է Դպրոց-պարտեզի լողավազանում: Առաջին դասարանցիները դասվարի, ուսուցչի օգնականի հետ շաբաթը մեկ անգամ, ըստ ժամանակացույցի, քայլարշավով անցնում են վերանանցումով, հասնում դպրոց-պարտեզի ծածկած լողավազան, մեկ ժամ լողում, քայլելով վերադառնում Նոր դպրոց: 2 խումբ էլ 5 տարեկաններն են, նրանց լողի ուսուցումը կազմակերկվում է նույն ձևով:
1-3-րդ դասարաններում հեծանվային ուսուցման կազմակերպպում.
Սովորողներ, ովքեր չգիտեն. Կազմակերպում է ուսուցչի օգնականը՝ անհատական ուսուցմամբ, վայր՝ Նոր դպրոցի տրահ, Բ-1 խաղահրապարակ
23. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 2 ժամ մասնակցում է «Երաժշտական գործունեություն», «Կերպարվեստ», «Մարմնամարզություն», «Մաթեմատիկա բանավոր» դասընթացներից մեկին:
Նոր դպրոցի կազմակերպումը
1-3-րդ դասարաններում 2 ժամ ընտրությունը առանձին օրերե են,առաջինները՝ առանձին, երկրորդները՝ առանձին, երրորդները՝ առանջին, խմբերը մեծ էին դրա համար ենք այդպես արել: Սովորողները ընտրել են՝ Մարմնակրթություն, կերպարվեստ, բանավոր մաթեմատիկա: Մարմնակրթությունը պարապում է Դավիթ Ֆահրադյանը, սովորողներին ուղեկցում է դասվարներից մեկը, մյուսը՝ պարապում է բանավոր մաթեմատիկա դասընթացը, որի ծրագիրը դասվարը նախօրոք քննարկել է մենթոր ուսուցչի՝ Լիանա Հակոբյանի հետ: Կերպարվեստը պարապում է Հասմիկ Թոփչյանը:
24. Տնային ուսումնական աշխատանքը սովորողի և ծնողի համաձայնեցված ընտրությամբ լրացուցիչ աշխատանք է:

25. Լրացուցիչ կրթությունը դաշնամուրի, ազգային նվագարանի, վոկալի, պարի, թատրոնի, կերպարվեստի, խեցեգործության-քանդակի, շախմատի, լողի, հեծանվի, մարմնամարզության, թեթև աթլետիկայի ուսումնական գործունեությունն է, երկարացված օրվա ծրագիրը, որոնց կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս, սահմանված կարգով:
1-3-րդ դասարաններում երկարացված օրվա պայմանագիր կնքել են 105 սովորող, լող, հեծանիվի լրացուցիչ կրթության պայմանագիր կնքել են 5 տարկանները, 1-ին դասարանցիները:
26. Դասավանդողի բլոգին, դպրոցի, կրթահամալիրի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը, էլեկտրոնային անձնական հաշվեն վարելը սովորողի ուսումնական աշխատանքն է: Խրախուսվում է սովորողի անձնական ուսումնական բլոգի ստեղծումը և վարումը:

5 տարեկանների, 1-3-րդ դասարանների դասվարները վարում են դասարանական բլոգները, որոնք հրապարակված են ենթակայքում, 3-րդ դասարանցիների անհատական բլոգները բացված են, Աշնանային հավաքի օրերին ներկայացրել են, արդեն սկսել են աշխատել:

27. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով ընդմիջվում են ուրախ մարմնամարզությամբ:
Առանց զանգի ուսուցման կազմակերպման դեպքում և՛ մարմնամարզությունը, և՛ շախմատը, և՛ սեղանի խաղերը, և՛ հեծանիվ վարելը, և՛ երաժշտության ունկնդրումը հանգստանալու լավ միջոցներ են կրտսեր դպրոցում:

28. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:
Բաց համակարգը, կանաչ լանջերը, բակերը բաց ընթերցանության, պլեներների, պարապմունքների կազմակերպման լավ միջավայր են: Այս ուսումնական տարում բացօթյա պարապմունքների համար արդյունավետ է պարոնների օգտագործումը:

29. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները ուսումնական գործունեության բաղկացուցիչն են:
Դասվարները ուսումնական ճամփորդությունների նախագծերը հրապարակում են դասարանական բլոգներում, սահմանված կարգով ուղարկում են հայտը, ուսումնական ճամփորդությունները սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում, որոնք կիսամյակային աճի բնութագրերի մեջ ցուցանիշ են:

30. Սովորողը սահմանված կարգով մասնակցում է ինքնապաստարկմանը:

31. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով սովորողի ուսուցումը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով:

32. Տնական շրջան Հայաստանից բացակայած, տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողի համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ուսումնական ծրագրերով:

33. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին և արտաքին տարածքների և գույքի խնամքը նաև սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:

34. Սովորողի ուսումնական աշխատանքը գնահատանիշով չի գնահատվում: Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքները, այդ թվում՝ սովորողի մասնակցությամբ ստեղծված և էլեկտրոնային ցանցերում տեղադրված նյութերի հղումները, գործունեության յուրաքանչյուր բնագավառից աշխատանքները էլեկտրոնային տարբերակով ներկայացվում են նրա կամ դասարանի բլոգում (էջում):
Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստուգատեսներում, ստեղծագործական հավաքներում: Յուրաքանչյուր սովորողի համար, սահմանված կարգով և ժամկետներում, լրացվում է զարգացման բնութագիր, որում ներկայացվում են սովորողի արժեքային համակարգը, նրա կողմից յուրացված գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակական բնութագիրը: Սովորողի ծնողը սահմանված կարգով մասնակցում է իր երեխայի բնութագրի, բլոգի վարման աշխատանքներին: